Կարգապահական գործ թիվ ԿԳ-17118

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի ապրիլի 03-ի թիվ 79-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/58-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Մարտիրոսյանին (արտոնագիր թիվ 310) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Քաղաքացի Մարիամ Մարտիրոսյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմելով Պալատ՝ հայտնել է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանը **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** ներկայացրել է իր շահերը թվով երկու քաղաքացիական գործով, որից առաջինն իր եղբորորդի՝ Արման Սարգիսի Մարտիրոսյանին անհայտ բացակայող ճանաչելու, իսկ երկրորդը՝ վերջինիս անգործունակ ճանաչելու պահանջի մասին գործով:

Դիմողը նշել է, որ առաջին գործն ավարտվել է, իսկ երկրորդն՝ ընթացքի մեջ է: Արման Սարգիսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին գործով փաստաբան Արմեն Մարտիրոսյանը Դիմողից վերցրել է 2.000 (երկու հազար) ԱՄՆ դոլար գումար, սակայն պայմանագիր չի կնքել, ինչպես նաև երաշխավորել է, որ 2-3 ամսում կլինի բավարարված դատական ակտ: Այդ ժամանակահատվածում դիմումը չի բավարարվել, իսկ 2016 թվականի դեկտեմբեր ամսին տեղի ունեցած դատական նիստերից մեկից հետո, փաստաբանն իրեն հայտնել է, որ անհրաժեշտ է ևս 500 ԱՄՆ դոլար գումար երաշխավորված հաղթանակն ապահովելու համար: Դիմողը չի համաձայնել վճարել լրացուցիչ գումար և փաստաբանից պահանջել է կատարել ստանձնած պարտականությունը: Դրանից հետո Արմեն Մարտիրոսյանը չի պատասխանել Դիմողի բոլոր զանգերին և խուսափել է կապ պահպանել ավելի քան երկու ամիս, ինչի հետևանքով Դիմողը ստիպված է եղել նշված քաղաքացիական գործով այլ փաստաբան ներգրավելու:2

Դիմողը 25.08.2017 թվականին լրացնելով իր դիմումը՝ հայտնել է, որ

փաստաբան Արմեն Մարտիրոսյանը՝ հանդիսանալով Արման Սարգիսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱԴԴ/0690/02/14 քաղաքացիական գործով իր ներկայացուցիչը, առանց իրեն տեղեկացնելու և դատարանին որևէ հարգելի պատճառ ներկայացնելու՝ անհիմն չի ներկայացել նշված գործով 23.01.2017թ. հրավիրված նախնական դատական նիստին, որը կայացել է իրենց կողմի բացակայությամբ և դատարանն անցել է դատաքննության:

Դիմողը խնդրել է գնահատական տալ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի վերոգրյալ վարքագծին, ինչպես նաև ներկայացրել է Արման Սարգսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին 07.04.2014թ. դատարան մուտքագրված դիմումի պատճենը և թիվ ԵԱԴԴ/0690/02/14 քաղաքացիական գործով 23.01.2017թ. դատական նիստի ձայնագրության կրիչը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 25.09.2017թ. թիվ 302-Ա/ԿԳ-17118 որոշմամբ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր թիվ 310) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով :

29.09.2017թ.կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը ներկայացել է Խորհրդի նիստին և պնդել դիմումում նշված հանգամանքները:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողը տվել է բացատրություն այն մասին, որ ամբողջությամբ առարկում է իրեն հասցեագրված մեղադրանքների դեմ: Նա նշել է, որ Մարիամ Մարտիրոսյանի եղբոր՝ Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանի հետ 14.02.2014թ. կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր համաձայն որի պարտավորվել է վերջինիս որդուն Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու դիմում նախապատրաստել և ներկայացնել դատարան, ինչպես նաև դատարանում ներկայացնել վերջինիս շահերը: Նշված պայմանագրի 3-րդ կետի համաձայն Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանը վճարել է 1000 ԱՄՆ դոլարին համարժեք 400.000 դրամ գումար, որից՝ 200. 000 դրամ գումարը որպես կանխավճար, իսկ մնացած 200.000 դրամը որպես հետագա երկու ամիսների ծառայության վճար: Ի կատարումն վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունների համապատասխան փաստաթղթերի փաթեթ և դիմում է նախապատրաստել Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու համար և 19.02.2014թ. այդ կապակցությամբ դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դիմումի հիման վրա Արման Սարգսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարանում հարուցվել է քաղաքացիական գործի վարույթ, սակայն մի քանի օր անց Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանը մահացել է և ինքը ստիպված հրաժարվել է դիմումից: Այնուհետև, 2014 թվականի ապրիլ ամսին Մարիամ Մարտիրոսյանն իրեն լիազորագիր է տվել որպեսզի շարունակի եղբոր գործը: Մարիամ Մարտիրոսյանի հետ պայմանավորվածության համաձայն կրկին դիմում է նախապատրաստել Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու համար և ներկայացրել դատարան:

Գործի քննության ընթացքում դատարանը օրենքով սահմանված կարգով նշանակել է դատահոգեբուժական փորձաքննություն, սակայն Արման Մարտիրոսյանը հրաժարվել է ներկայանալ փորձաքննության, իսկ որոշ ժամանակ անց ընդհանրապես ևնհայտացել է, ինչի պատճառով վերջինիս անգործունսւկ ճանաչելու դատական գործընթացը կասեցվեց, ուստի չի կարողացել Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու դիմումի քննությունը հասցնել ավարտին: Արման Մարտիրոսյանի անհայտանալուց հետո շուրջ մեկ տարի անց Մարիամ Մարտիրոսյանի հետ միասին ձեռնամուխ է եղել Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու գործընթացին և այդ պահանջով դատարան դիմում է ներկայացրել: Նշված քաղաքացիական գործի հետ կապված շուրջ մեկ տարի տարբեր գործառույթներ է իրականացրել, սակայն արդյունքում դատարանը մերժել է դիմումը՝ թեև բոլոր հիմքերը առկա են եղել Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու համար:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

29.11.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն Արմեն Մարտիրոսյանը գործել է Կանոնագրքի 2.7.2,3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի պահանջների պահպանմամբ:

01.12.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի ապրիլի 03-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ

եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 14.02.2014թ. Դիմողի եղբոր և Պատասխանողի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն իրավաբանական ծառայություններ պետք է մատուցվեր կապված՝ Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանի որդուն դատական կարգով անգործունակ ճանաչելու հետ: Պայմանագրի համաձայն փաստաբանը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություններ և պաշտպանել նրա շահերը Հայաստանի Հանրապետության բոլոր դատական ատյաններում՝ որպես հայցվոր, պատասխանող, երրորդ անձ, իսկ Պատվիրատուն պարտավորվել է կատարել վճարումներ մատուցված ծառայությունների դիմաց:
2. Պատասխանողի կողմից 19.02.2014թ. Արման Սարգսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու մասին դիմում է ներկայացվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանի մահից հետո Պատասխանողը հրաժարվել է դիմումից: 07.04.2014թ. Պատասխանողը կրկին դիմում է ներկայացրել դատարան՝ Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու մասին: Գործի քննության ընթացքում դատարանը օրենքով սահմանված կարգով նշանակել է դատահոգեբուժական փորձաքննություն: 13.05.2015թ. Պատասխանողը դիմում է ներկայացրել դատարան՝ Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու մասին:

Նշված փաստերը հաստատվում են կարգապահական գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ 14.02.2014թ. ծառայությունների մատուցման պայմանագրով, թիվ ԵԱԴԴ/0690/02/14 քաղաքացիական գործով Դատալեքս դատական տեղեկատվական համակարգից տպված քաղվածքով, 19.02.2014թ., 07.04.2014թ. և 13.05.2015թ. դատարան ներկայացված դիմումներով, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.03.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արմեն Մարտիրոսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 16.03.1999թ.: 2015-2018թթ. ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 3 կարգապահական վարույթ, որոնցից մեկը կարճվել է, իսկ երկուսը դեռ չեն ավարտվել :

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերողվող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Դիմողն ըստ էության Պատասխանողին վերագրում է իրեն բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարությունը բարեխիղճ և ժամանակին չկատարելու, հեռախոսազանգերին չպատասխանելու, հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու վարքագիծ;

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի*:

Ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն փաստաբանի կողմից դիմումում նշված խախտումները կատարելու փաստը:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է, որ Պատասխանողը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դիմողի եղբոր հետ՝ վերջինիս որդուն դատական կարգով անգործունակ ճանաչելու համար: Պատասխանողի կողմից 19.02.2014թ. Արման Սարգսի Մարտիրոսյանին անգործունակ ճանաչելու մասին դիմում է ներկայացվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանի մահից հետո Պատասխանողը հրաժարվել է դիմումից: 07.04.2014թ. Պատասխանողը կրկին դիմում է ներկայացրել դատարան՝ Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անգործունակ ճանաչելու մասին: Գործի քննության ընթացքում դատարանը օրենքով սահմանված կարգով նշանակել է դատահոգեբուժական փորձաքննություն: 13.05.2015թ. Պատասխանողը դիմում է ներկայացրել դատարան՝ Արման Սարգսի Մարտիրոսյանին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու մասին:

Այսինքն, Պատասխանողի կողմից իրականցվել են անհրաժեշտ գործողություններ Սարգիս Անդրանիկի Մարտիրոսյանի որդուն անգործունակ ճանաչելու համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը*:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն կարգապահական վարույթի ընթացքում այդպես էլ չհիմնավորվեցին Դիմողի կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի տվյալ պայմաններում չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի , 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր թիվ 310) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-17118 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

03 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/58-Ա
ք. Երևան